



«ԷկոԼիդ»

բնապահպանական և կրթական
հասարակական կազմակերպություն

09-07-2019թ

**Գորիս համայնքի ղեկավար
Առուշ Առուշանյանին**

Հարգելի պրն. Առուշանյան,

Որպես բնապահպանական և կրթական հասարակական կազմակերպություն «ԷկոԼիդ» ՀԿ գրանցվել է 2019թ.-ին և նրա գործունեության նպատակն է նպաստել ՀՀ-ում և Սյունիքում մասնավորապես, հասարակության բնապահպանական գիտակցության բարձրացմանը՝ ձեռնարկելով հասարակության լայն շերտերի հետ մասնագիտական միջոցառումներ:

«ԷկոԼիդ» ՀԿ-ն խնդրում է Գորիսի համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող վարչական երկրորդ շենքից հատկացնել 10-15 մ² գրասենյակային տարածք՝ 5 տարի վարձակալությամբ:

Ակնկալվող գրասենյակային տարածքն անհրաժեշտ է կազմակերպության գործունեությունը կազմակերպելու համար: «ԷկոԼիդ» ՀԿ-ն իր գործունեությամբ կնպաստի Գորիս խոշորացված համայնքի համայնքաբնակների բնապահպանական գիտակցության բարձրացմանը, ինչպես նաև վեր կհանի համայնքում, մարզում և երկրում առկա բնապահպանական խնդիրներ և կառաջարկի համապատասխան լուծումներ շահագրգիռ կողմերին:

«ԷկոԼիդ» ՀԿ-ի նախագահ՝

Իրինա Դարբինյան

| | | |
|---|------|--------|
| «ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ԸՄՐՁԻ ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ» ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎՈՐՉԱԿԱՆ ԴԻՄԱՐԿ ՔԱՂԱՔԱՏԻՆԵՐԻ ՍՊԱՍՐԿՍԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ | | |
| ՄՏԻՑ | 1952 | |
| 11 | 07 | 2019թ. |